«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Էմիլիա Մարդումյան

Մանկապարտեզ՝ « Սևքարի մանկապարտեզ » ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

Ներածություն ----------3

Գլուխ 1. Խաղի դերն ու նշանակությունը մանկապարտեզում

1.1. Խաղային գործունեության առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում ----------4

1.2. Խաղը որպես գիտելիքի յուրացման մեթոդ և միջոց ----------6

1.3. Խաղի կարևորությունը միջանձնային հարաբերություններում ----------8

Գլուխ 2. Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները

2.1. Դերախաղ. էությունը, նշանակությունը ----------9

2.2. Դերային խաղի անցկացման փուլերը ----------12

2.3. Դերախաղը որպես հոգեբանական պաշտպանություն ----------12

2.4. Դերախաղի նշանակությունը երեխայի զարգացման գործում ----------14

Գլուխ 3. Հետազոտական աշխատանքի գործնականությունը պարապմունքների ընթացքում ----------15

Եզրակացություններ ----------19

Օգտագործված գրականության ցանկ ----------20

Ներածություն

«Եթե երեխան ապրում է համերաշխ, ընկերական մթնոլորտում և իրեն պետքական է զգում, ապա նա սովորում է սիրել» Մ. Մոնթեսորի

Թեմայի արդիականությունը: Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է, այն նախադպրոցական տարիքի երեխաների առաջատար գործունեության ձևն է և նախատիպը հետագայում բոլոր տեսակի գործունեությունների: Մանկավարժության և հոգեբանության տեսաբանները գտնում են, որ երեխաիի հոգեբանությունն ու անհատականությունը ցայտուն և անմնացորդ արտահայտվում են դերախաղի մեջ: Դերախաղը՝ որպես մանկապարտեզում կիրառվող տեխնոլոգիա, դաստիարակի աշխատանքի կարևոր բաղադրիչներից է, սանի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկը: Դերային ստեղծագործական խաղերը նպաստում են նախադպրոցական տարիքի երեխայի հինգ զգայարանների զարգացմանը, ամրապնդում լեզվական արտահայտման և ընկալման հմտությունները, օգնում հասկանալ փոխհարաբերությունները, վերլուծական կապեր հաստատելուն, խթանում ստեղծագործական մտածողությունը, մեծացնում ու ամրապնդում ինքնագնահատման զգացումը, զարգացնում զգացմունքների արտահայտման, մանր ու խոշոր շարժողական հմտությունները, նպաստում ուրախ և ազատ մանկության գաղափարը իրականություն դարձնելուն: Դերային խաղի միջոցով երեխաները սովորում են կենտրոնանալ, օգտագործել իրենց երևակայությունը, կրկնօրինակել չափահասների վարքը և իրենց սեփական աշխարհի վերահսկման զգացողությունը զարգացնել:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել դերախաղերի դերը նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման գործում, ցույց տալ, թե ինչպես է դերախաղը՝ որպես արդյունավետ ինտեգրված գործունեություն, նպաստում երեխայի խոսքի, երևակայության և մանր մկանային կարողությունների զարգացմանը, նպաստում նրա համակողմանի և ներդաշնակ զարգացմանը:

Գլուխ 1. Խաղի դերն ու նշանակությունը մանկապարտեզում

1.1. Խաղային գործունեության առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Նախադպրոցական տարիքի երեխաների խաղային գործունեության առանձնահատկությունները լավագույնս ներկայացված են Ա.Բ. Ուսովայի, Ռ.Ի. Ժուկովսկայի և Դ.Վ. Մենջերիցկակայի աշխատություններում, ովքեր բնությագրելով նախադպրոցականի խաղային գործունեության էությունը, նշում են դրա ստեղծագործական բնույթը: Խաղային գործունեության ընթացքում երեխայի համար ստեղծվում են լավագույն պայմաններ (ազատ և բնական միջավայր, հուզական ներդաշնակություն, հավասարության մթնոլորտ)՝ հասակակիցների միջավայրում «այստեղ և անհապաղ» ինքնահաստատվելու համար: «Այստեղ և անհապաղ» ինքնահաստատվելու հնարավորությունը երեխայի խաղային գործունեության հիմնական դրդապատճառն է, հետևաբար և երեխաների խաղային գործունեության կազմակերպման ու կառուցման գլխավոր սկզբունքը: Կարլ Գրուսը գտնում էր, որ խաղը երիտասարդ օրգանիզմի անգիտակից նախապատրաստումն է կյանքին:[1] Ըստ Զ. Ֆրեյդի երեխան խաղում է իր անլիարժեքությունից դրդված՝ այժմ հնարավորություն չունեալով լինելու բժիշկ, տիեզերագնաց: Խաղը գործունեության տեսակ է, որի դրդապատճառները ոչ թե նյութական արդյունք և օգուտ ստանալն է, այլ հաճելի ապրումները, ընդունակությունների մարզումը, սոցիալական կապերի ստեծումը:[2]
Խաղը երեխայի ներքին պահանջմունքներով պայմանավորված գործունեություն է, որը յուրաքանչյուր երեխայի համար ունի սուբյեկտիվ՝ ներանձնային նշանակություն և արժեք: Խաղն ինքնարժեք գործունեություն է և անփոխարինելի է նախադպրոցականի կյանքում: Որևէ այլ գործունեություն չունի խաղային գործունեության նշված առավելությունները: Այսպիսով՝ խաղային գործունեությունը նախադպրոցականի անձնավորության կայացման ներքին սուբյեկտիվ գործոն է:

Խաղն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացմանը, օրինաչափորեն նպաստում է նրանց հոգեկանի զարգացմանը, հուզազգացմունքային ոլորտի հարստացմանը, հասակակիցների հետ փոխհարաբերությունների հաստատմանը, սեփական սոցիալական փորձի ձեռքբերմանը: Խաղը նախադպրոցականի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց է և նրա հետագա զարգացման հիմնական գրավականը: Միավորելով խաղային գործունեության սուբյեկտիվ արժեքը և զարգացնող

[1] Теория игры, Карл Гросс / https://family365.ru/posts/razvitie-detei-teorija-igry-karla-grossa.html
[2] Фрейд З. , Психоанализ, теория и метод. Концепция защитных механизмов

օբյեկտիվ նշանակությունը՝ կարելի է եզրակացնել, որ խաղը նախադպրոցական տարիքի երեխաների կյանքի և գործունեության կազմակերպման ամենահարմար ձևն է: խաղային գործունեության հիմնական առանձնահատկություններից են. Խաղային գործունեության ընթացքում բավարարվում է նախադպրոցականի՝ ակտիվության և ինքնուրույնության, հաղորդակցման, մեծահասակների կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու, արտաքին աշխարհը ճանաչելու և այն արտացոլելու հիմնական պահանջմունքները: Ինչպես նշում էր Կ. Դ. Ուշինսկին, երեխան խաղի ընթացքում փորձարկում է իր ապագա կյանքը և «փորձում սեփական ուժերը»:[3]

Խաղը ստեղծագործական գործունեություն է, քանի որ այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը: Խաղի ընթացքում են լավագույնս դրսևորվում երեխայի նախադրյալները, հակումնե րն ու հետաքրքրությունները:

Խաղը աշխարճանաչման և աշխարհի արտացոլման եղանակ է, իմացական գործու նեություն: Խաղային գործունեության ընթացքում ձեռքբերած գիտելիքները կրկնակի արժեքավոր են՝ դրանք և՛ տեղեկատվական են, և՛ գործնական:

Խաղային գործունեությունն իր բնույթով ուղղված է նախադպրոցականի հուզակա մային ոլորտի զարգացմանը, հետևաբար և հիմնարար անձնային որակների ձևավո րմանը: Նախադպրոցականի անձնավորության ձևավորման գործընթացը պայմանավորված է նրա հուզական և կամային ոլորտների ներդաշնակ զարգացմամբ, ինչը լավագույնս ապահովվում է խաղային գործունեության ընթացքում: [4]

Այսպիսով, ակնհայտ են խաղային գործունեության առավելությունները մանկան գործունեության այլ ձևերի նկատմամբ, ուստի խաղը, հանդես գալով որպես նախադպրոցական տարիքի երեխաների առաջատար գործունեություն, նախադպրոցահասակ երեխաների զարգացման և դաստիարակության լավագույն միջոցն է, և պետք է դառնա նրանց կյանքի և գործունեության կազմակերպման հիմնական ձևը:

1.2. Խաղը՝ որպես գիտելիքի յուրացման մեթոդ և միջոց

[3] Ушинский К. Д. , о дошкольном воспитании https://ignom.ru/books/doshkolnaya_pedagogika/dshped32.html

[4] Губанова Н. Ф. «Развитие игровой деятельности. Система работы в средней группе детского сада» с. 23-26

Ուսումնական գործունեությունը հասարակական, պատմական, սոցիալ-մշակութային փորձի նպատակասլաց, հաջորդական փոխանցումն է, որի ընթացքում յուրացվում են գիտելիքներ, հմտություններ, կարողություններ և, ամենակարևորը, ձևավորվում է անձը: Նախադպրոցական տարիքը համարվում է անհատականության ձևավորման ու կայացման առաջին աստիճանն ու հիմքը: Ուսումնական գործունեությունը մեծ ազդեցություն ունի երեխայի հոգեկան և անձնային զարգացման վրա:Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել նախադպրոցականներին բնորոշ տարիքային առանձնահատկությունները: Տարրական դասարաններում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ երեխայի՝ դպրոց մուտք գործած առաջին օրվանից նրան ուղղորդում էդեպի ինքնակազմակերպման, ինքնուրույնության, սեփական արարքների համար պատասխանատվության գիտակցման և գիտելիքներ ձեռք բերելու նպատակասլաց գործողությունների: [5]

Նախադպրոցականների հետ ուսուցիչը ինչպիսի՞ մանկավարժամեթոդական և հոգեբանական մոտեցումներ պետք է դրսևորի, որպեսզի կարողանա երեխայի մեջ ստեղծել նախնական պատկերացումներ ու վերաբերմունք՝ գիտելիքի, շրջապատի, աշխարհի նկատմամբ: Վ.Ա.Սուխոմլինսկին գրել է. «Բնության, խաղերի, երաժշտության, հեքիաթների սքանչելի աշխարհը, որը շրջապատում էր երեխային մինչև դպրոց գալը, չպետք է փակվի նրա առջև դպրոցի դռներով: Երեխան միայն այն ժամանակ անկեղծորեն կսիրի դպրոցը, դասարանը, երբ ուսուցիչը նրա համար պահպանի այն ուրախությունները, որոնք երեխան ուներ մինչ այդ»: [6]

Մանկավարժության և հոգեբանության ոլորտը ներկայացնող մասնագետները գտնում են, որ երեխայի անհատականությունն ու աշխարհընկալումը առաջին հերթին լիարժեք և ամբողջական կերպով արտահայտվում են խաղի միջոցով: Այն երեխայի համար ոչ միայն կենսաբանական ներքին պահանջ է, այլև ճանաչողության միջոց և ուսուցման բաղկացուցիչ մաս: Խաղն ունի այնպիսի մանկավարժական դերակատարում, որ կարող է երեխային ընդգրկել ակտիվ ուսուցման մեջ:Խաղը՝ որպես գիտելիքի յուրացման միջոց և մեթոդ,կարևոր է և արդյունավետ:

Խաղի շնորհիվ ակտիվանում է երեխայի հուզական աշխարհը, զարգանում է երևակայությունը: Նա սովորում է հաղթահարել կյանքի դժվարին

[5] Шмаков С.А. «Игры – шутки, игры – минутки» Москва. «Новая школа» 1993
[6] Сухомлинский В.А., Сердце отдаю детям. Рождение гражданина. Письма к сыну.-К.: Рад. шк" 1985., 557 с

իրավիճակները:Համատեղ ուսումնական գործունեությունն ու խաղը երեխաների մեջ դաստիարակում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը, վճռականությունը և պատասխանատվության զգացումը:
Այսպիսով՝ խաղի շնորհիվ երեխան ճանաչում և բացահայտում է երևույթները, առարկաները, իրեն շրջապատող աշխարհն ու մարդկանց:Եվ ահա ինչու խաղի միջոցով ուսուցումը ոչ միայն նպաստում է երեխաների գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը,այլև անհատականության ձևավորմանն ու զարգացմանը:

Ընդունված է խաղերը բաժանել երկու հիմնական խմբի՝

- Ստեղծագործական, որոնք ընդգրկում են սյուժետադերային խաղեր, խաղբեմականացումներ:
- Կանոնավոր խաղերի մեջ են մտնում դիդակտիկ, շարժողական, երաժշտական խաղերը, խաղ-զվարճալիքները:

Սյուժետադերային խաղերն առաջին հերթին արտացոլում են շրջակա միջավայրը, մարդկանց վարքը և գործունեության տարբեր ոլորտները: Այս խաղերն ազատ և ինքնաբուխ են: Խաղի ընթացքում մասնակիցների շփման, հաղորդակցման, համատեղ ակտիվության դրսևորման պրոցեսում համագործակցության մեջ են մտնում երեխայի իրական և դերային հարաբերությունները: Դրանք փոխադարձաբար նպաստում են խաղի արդյունավետությանը և երեխայի ներուժի բացահայտմանը: Խաղ-բեմականացումները սյուժետադերային խաղերի տարատեսակներից են: Ունեն սյուժե, բովանդակություն, դերեր, որոնց կատարումը պահանջում է մեծ ջանքեր: Այստեղ պետք է հարազատ մնալ տեքստին, իսկ խաղի բովանդակությունը վերցվում էհիմնականում գեղարվեստական ստեղծագործություններից: Կանոնավոր խաղերն ունեն կանոններ, բովանդակություն, խաղային գործողություններ և խաղային արդյունք:Դրանց թվին են պատկանում դիդակտիկ խաղերը, որոնք ունեն ուսուցողական բնույթ: Թերևս բոլոր խաղերն էլ նպաստում են երեխայի զարգացմանը: Յուրաքանչյուր խաղ ընտրելիս պետք է հաշվի առնել երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները:

1.3. Խաղի կարևորությունը միջանձնային հարաբերություններում

Օգտագործելով խոսքը՝ երեխան շփման մեջ է մտնում, համագործակցում է մյուսների հետ: Այս առօրյայի ռոբոտացված կենսակերպը, պարբերաբար երեխայի նկատմամբ անտարբերությունը վատ է ազդում երեխայի հոգեկան վիճակի վրա. նա դառնում է ագրեսիվ, նյարդային, ամաչկոտ, տրամադրության անկումներով: Սա արդեն ազդում է երեխաների միջանձնային հարաբերությունների վրա: Միջանձնային հարաբերությունները ստեղծվում են իրավիճակների դեպքում, խաղի ժամանակ: Երբ երեխան խաղալիք է ուզում ընկերոջից, կամ ուզում է որևէ բան խնդրել մեծահասակից,պետք է խոսի նրա հետ, հարցնի, մտերմանա : Դերային խաղի միջոցով ստեղծվում է կապ, միջանձնային հարաբերություն երեխաների միջև: Այս կապը դրական է ազդում երեխայի զարգացման գործում. երեխան ազատվում է բարդույթներից, մեկուսանալու ցանկությունից, ձեռք է բերում ինքնավստահություն: Յուրաքանչյուր ներկայացում խաղալիս՝ երեխան սիրում է իր շուրջն ունենալ դեկորացիաներ, տիկնիկներ և այլն: Երբ մենք տալիս ենք երեխաներին ինքնուրույն գործելու հնարավորություն , նա իր հավաքածուից գտնում է այն, ինչն իրեն կօգնի մտնել դերի մեջ: Թատերական խաղեր խաղալիս երեխաներն իրենք են ստեղծում դեկորատիվ պայմաններ (մենք մեծահասակներով կարող ենք հիշել մեր մանկությունից նմանատիպ դրվագներ): Դեկորացիաներ պատրաստելու համար կարող են ծառայել հին անկողնու պարագաներ, հեռուստացույց, կեղծամներ, գլխարկներ և այլն: Այսպիսով, երեխան իր համար ստեղծում է ներկայացման, դերախաղի պայմաններ, սկսում շփվել երևակայական կերպարների հետ: Նման խաղից հետո շփումը այլ երեխաների հետ շատ անմիջական է լինում: Շատ հաճախ երեխաների մոտ, ինչպես որ մեծահասակների մոտ, ինքնադրսևորումը դերախաղի միջոցով լինում է առավել դյուրին : Երեխան իր կյանքի ոչ մի փուլում չի սովորի այդքան շատ, ինչքան խաղային գուրծունեության ընթացքում: 1,5 տարեկանից փոքրիկը ընդօրինակում է այն, ինչ անում են մեծերը. մայրը լվանում է ափսեները, պապիկը կարդում է, հայրիկը մեքենա է վարում: Իհարկե, ոչ բոլոր երեխաներն են կարողանում կռահել ու խաղալ դերային խաղ:

ԳԼՈՒԽ 2. Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները

2.1. Դերախաղ. էությունը, նշանակությունը

Դերային խաղն ուսման և հոգեբանության մեջ կիրառվող մեթոդ է: Սանի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում: Երեխաների անհատական առանձնահատկություններն ու բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը երեխան իր վրա է վերցնում ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության ձևավորման գործում. դիմացկություն, ցավի նկատմամբ, արժանապատվության, պատասխանատվության, վստահության և արդարության զգացում: Իր կյանքի ոչ մի փուլում երեխան չի սովորի այդքան շատ ու արդյունավետ, որքան իր մնակական խաղերի ընթացքում: Այդ պատճառով խաղային գործունեությունը պետք է տեղափոխել նաև դպրոց և շարունակել երեխայի ամբողջ կյանքի ընթացքում, նույնիսկ հասուն տարքում: Արդեն որոշակի բնավորության գծեր ու նախասիրություններ ունեցող երբեմնի երեխան նույնպես կարիք ունի խաղերի, որովհետև դրանց միջոցով ավելի դյուրին ու մատչելի է դառնում ամեն ինչ: Դերային խաղը գործունեության ինքնաբուխ ներքին ուղղվածություն ունեցող տեսակ է, որի միջոցով երեխաները բացահայտում և զարգացնում են սեփական անձի և աշխարհի մասին իրենց ընկալումը: Չնայած աշխարհի տարբեր մասերում ապրող ու սովորող երեխաների խաղերն ունեն տարբեր ուղղվածություն և առանձնահատկություններ, նրանց խաղային թեմաները շատ նման են: Խաղերում երեխաները կերտում են արդեն ծանոթ միջավայր և իրավիճակներ, նմանակում են այն մարդկանց, ում ճանաչում են՝ ընտանիքի անդամներին, ընկերներին, հեքիաթի հերոսներին և խաղում են իրենց շրջապատում ապրող տարբեր մարդկանց համապատասխան դերերը: Նրանք վերարատադրում են աշխարհն այնպես, ինչպես իրենք են տեսնում, կամ յուրովի արտահայտում այն, ինչն այդ աշխարհում վախեցնում ու շփոթեցնում է նրանց: «Ընկալելով երեխաների խաղը» գրքում Ռութ Հարթլին և մյուս համահեղինակները շատ դերային խաղը սահմանում են հետևյալ կերպ. «Դերային խաղը շատ մանուկների ազատ խաղն է, մեկն այն ուղիներից, որով երեխաները հետազոտում են իրենց տիեզերքը, նմանակում են իրենց շրջապատում տեղի ունեցող գործողություններն ու սովորությունները: Սա դրամատիկական ժանրում նրանց առաջին և ամենավաղ ինքնադրսևորումն է, սակայն չի կարելի այն շփոթել թատերախաղի կամ ներկայացման հետ: Դերային խաղը պարզապես մի դրվագ է, որը տևում է լոկ մի պահ: Այն կարող է տևել մի քանի րոպե կամ շարունակվել ինչ-որ ժամանակ: Նույնիսկ հնարավոր է, որ երեխան կրկնի դերային նույն խաղը՝

կախված նրա հետաքրքրության աստիճանից: Սակայն, կրկնությունը չի կարելի ընկալել որպես ներկայացման փորձ: Դա ավելի շուտ ցանկալի գործողության կրկնությունն է, որից երեխան պարզապես հաճույք է ստանում: Այն չունի սկիզբ կամ վերջ, և գործողություններն այս խաղում չեն զարգանում այնպես, ինչպես հատուկ է դրամատիկական ստեղծագործությանը»:[7]

Ստեղծագործական դերային խաղերը, հատկապես փոքրիկ երեխաների դեպքում, կոնկրետ ժամանակային առումով և տեղանքով սահմանափակված կամ պայմանավորված չեն: Անկախ նրանից, թե որտեղ է տեղի ունենում դերային խաղը, այն օգնում է երեխաներին իրենց վրա որոշակի պատասխանատվություն վերցնել, զարգացնել նոր հետաքրքրություններ: Ստեղծագործական դերային խաղում երեխաները կարող են ինքնաբուխ ձևով հնարել, խաղալ և մեկնաբանել բոլորին ծանոթ իրավիճակներ պարզապես իրենց հաճույքի համար: Նրանք խաղում պարզ ու հետաքրքիր զգացումներ են փոխանցում կողքից դիտողին, նրանք ապրում են իրականում, խաղում են առանց ձևականությունների և դերի հետագա գնահատանքի, նրանց դերային խաղ պարզ է ու գրավիչ՝ իրենց հստակ ու բարի աշխարհի նման: Դերային խաղում երեխաները ստեղծում են իրենց սեփական աշխարհը, որի միջոցով շփվում են իրականության հետ: Այս երևակայական աշխարհում նրանք փորձում են լուծումներ տալ իրական կյանքում ծագող խնդիրներին: Նրանք կրկնում, խաղարկում և վերապրում են այս իրադարձությունները: Այսինքն, կարելի է ասել, որ դերային խաղը օգնում է երեխաներին սեփական «ես»-ից բացի նկատել, նաև՝ փոխհարաբերություններ հաստատել ուրիշների հետ: Հասակակիցների դերային խաղերը օգնում են կառուցել հարաբերություններ ընկերների հետ, պաշտպանել սեփական հետաքրքրությունները և հաշվի առնել այլ մարդկանց ցանկությունները:

Դերային խաղում երեխաները հաճախ անկազմակերպ և ինքնաբուխ ձևով իրենց վրա են վերցնում ինչ-որ մեկի աշխատանքը (օրինակ՝ ձևացնում են, թե իրենք վարսավիր են և կտրում են ինչ-որ մեկի մազերը), օգտագործում են որևէ առարկա այլ բանի փոխարեն (օրինակ՝ աթոռի օգտագործումը՝ որպես բեռնատար կամ մարդատար մեքենա), կամ առօրեական իրադրություններ են խաղում (գնալ կենդանաբանական այգի, գնումներ կատարելու և այլն): Դերային խաղի միջոցով երեխաները սովորում են կենտրոնանալ, օգտագործել իրենց երևակայությունը, կրկնօրինակել չափահասների վարքը և իրենց սեփական աշխարհի վերահսկման

[7] Рябкова И. А., ролевое замещение в игре дошкольников в условиях Разной предметной среды, М., 2019, с 157

զգացողությունը զարգացնել: Դերային խաղի համար հաճախ պահանջվում է խմբային համագործակցություն: Օրինակ՝ «Ես կլինեմ մայրիկը, իսկ դու՝ հայրիկը, լա՞վ, իսկ նա էլ կլինի մեր բալիկը», կամ՝ «Գնում ենք խանութ կոնֆետներ գնելու»:

Դերախաղի էական նշանակությունն այն է, որ երեխան հայտնվում է ուրիշ մարդու կերպարում, նրա փոխարեն աշխարհին նայում է այն կերպարի տեսանկյունից, որին խաղում է: Երեխայի երևակայությունը զարգանում է հատկապես ստեղծագործական դերային խաղերի միջոցով, երեխան հավատում է իր հորինած կերպարին: Մտնելով կերպարի մեջ՝ երեխան դառնում է նա, ում ընդօրինակում է: Դերային խաղն ունի ուսուցանող և դաստիարակող նշանակություն: Այն խոսքային, խաղային և ուսուցման միաժամանակյա գործընթաց է: Դերային խաղի միջոցով երեխաները ձևակերպում և իրագործում են ծրագրեր, զարգացնում են անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ գաղափարները, սովորում են փորձի և սխալի միջոցով:[8] Այսպիսով, դերային խաղը նպաստում է նաև մտավոր զարգացմանը, զարգացնում երևակայությունը, ընդլայնում նոր ձևավորվող աշխարհհայացքը: հմտությունները՝ սովորելով կապեր գտնել: Դերային խաղն օգնում է յուրաքանչյուր երեխայի զգալ ու ճանաչել ընկերոջը, նույնիսկ այն ընկերոջը, ով մինչ այդ գոյություն չուներ նրանց համար, թերևս՝ միայն ֆիզիկապես, իսկ դա անտանելի է, առավել ևս, երբ շարունակական բնույթ է կրում: Բերեմ օրինակներ մանկապարտեզի օրինակով. երբ կերպարային դառնում են ուրիշ ու մուտք են գործում իրենց հետաքրքրող աշխարհ, իմ սաները դառնում են մի աշխարհի նույն բնակիչները: Օրինակ՝ խմբի մի քանի աշխույժ ու շփվող երեխաներ որոշում են խաղալ «Խանութ-խանութ»՝ իրենց լեզվով վերնագրված խաղը ու պետք է ընտրեն խաղընկեր, այլ կերպար, ով պետք է լինի իրենցից տարբերվող: Ինչպե՞ս են վարվում նրանք. դիմում են օգնության այն երեխային, ով ավելի չխոսկան ու հանգիստ է բնավորությամբ՝ «Կխաղա՞ս մեզ հետ», և, բնականաբար, երեխան համաձայնում է, որովհետև իրեն էլ է հետաքրքրում այդ խաղը, և խաղի ընթացքում նրանք համագործակցում են միմյանց հետ, տեղի է ունենում միջանձնային շփում և, ինչո՞ւ չէ, նաև ներանձնային, ու հաջորդ անգամ նրանք անպայման նորից մի այլ դերային խաղով կմիավորվեն, որովհետև անցած խաղի ընթացքում անձնային բացահայտումներ են եղել:

[8] Доронова Т.Н. 3-4 տարեկան երեխաների դաստիարակություն, կրթություն և զարգացում մանկապարտեզում. Կրթություն, 2006 թ. - 208 էջ

2.2. Դերային խաղի անցկացման փուլերը

Դերախաղերը սովորաբար իրականացվում են 3 փուլով՝ նախապատրաստման, բուն խաղի և անդրադարձի:

Առաջին՝ նախապատրաստման փուլում քննարկվում են այն կանոնները, որոնք պետք է պահպանվեն դերային խաղի ընթացքում: Բաժանվում են դերերը, նշանակվում են դիտորդները և ստանում դիտարկման հստակ առաջադրանք: Դերակատարները կարդում/մտածում են իրենց դերերի մասին:
Երկրորդ՝ խաղի փուլում խաղացողները ստանձնում են իրենց դերերը և կատարում դրանք՝ կախված իրավիճակից՝ կիրառելով ձեռք բերված հմտությունները: Մյուսները կատարում են իրենց դիտորդական հանձնարարությունը:
Երրորդ՝ անդրադարձի փուլում խաղացողներն առաջին հերթին արտահայտում են խաղի ընթացքում իրենց ունեցած զգացմունքները: Դիտորդները ներկայացնում են իրենց դիտարկումները: Հետո խոսվում է դերախաղի ժամանակ կայացրած որոշումների ու գործողությունների մասին, և աշխատանքն ամփոփվում է եզրակացություններով:

2.3. Դերախաղը որպես հոգեբանական պաշտպանություն

Դերային խաղերը երեխայի հոգեկանի զարգացման մեջ զբաղեցնում է կարևոր տեղ: Փոխարինող առարկաները զբաղեցնում են առաջին աստիճանը սիմվոլների հասկացման գործում: Չէ որ ոչ ոք թույլ չի տա երեխային իրական արդուկի կամ մուրճի հետ խաղալ: Այդ իսկ պատճառով մանկական ֆանտազիայում մուրճ է դառնում սովորական մատիտը: Դերային խաղում զարգանում է կամածին վարքը: Երեխայի մոտ զարգանում է կամածին ուշադրություն և կամածին հիշողություն: Հիմնվելով ստացած տեղեկության վրա, նա փողարինող առարկան օժտում է այն հատկանիշներով, որոնք առավել շատ են նրան հետաքրքրում: Մանկական հոգեբաները նշում են, որ ստեղծագործական ընդունակությունները ուժեղ զարգացած են այն երեխաների մոտ, ովքեր ունեն քիչ խաղալիքներ և ավելի շատ խաղում են քարերով, կամ կենցաղային առարկաներով: Իր երևակայության մեջ հասարակ առարկային տալով տարբեր գործառույթներ երեխաները սովորում են գնահատել առարկան բոլոր կողմերից: Հետագայում նման երեխաները իրադարձությանը նայում են դիտորդի տեսանկյունից և հասկանում այլոց տեսակետները: Դերային խաղերը հասարակության հետ պրոեկտման

վերաբերմունք են:[9] Հասակակիցների դերային խաղերը օգնում են կառուցել հարաբերություններ ընկերների հետ, պաշտպանել սեփական հետաքրքրությունները և հաշվի առնել այլ մարդկանց ցանկությունները:

Երեխաների համար դերային խաղերն ունեն ավանդական սյուժե խանութ, հիվանդանոց, դպրոց: Նման խաղեր խաղում են բոլոր սերունդները ավելացնելով նրանց տարբեր բովանդակություններ: Խաղի բովանդակության վերաբերմունքը փոխանցվում է մասնակիցներին: Մի <<մայրը>> կզայրանա ընտանիքի վրա բարձր ձայնով, մյուսը երգեր կերգի և գրքեր կկարդա : Մարդկանց հարաբերությունները իրար նկատմամբ շատ են հուզում երեխաներին: Դերային խաղի մեջ փորձելով կրկնել այն ամենը ինչ նրանք տեսել և լսել են՝ երեխաները իրենց վրա են վերցնում այս կամ այն ոճը: Ինչքան մեծանում է երեխան, այնքան բարդ էն դառնում դերային խաղերը: Ոչ բոլոր երեխաները հակվածություն ունեն դեպի դերային խաղ: Ամաչկոտ, քաշվող փոքրիկները հաճախ նախընտրում են սպորտային խաղեր, կամ մենակություն համակարգչի դիմաց: Չի կարելի թերագնահատել դերային խաղերի ներդրումը երեխայի զարգացման գործում: Եթե երեխան ամաչկոտ է, կարելի է երեխային գրավել դեպի խաղը այն վերածելով թատերական ներկայացման: Կախարդական հեքիաթները, որոնք սիրում են երեխաները, կօգնեն պատրաստել վարքի ճիշտ հմտությունների, յուրաքանչյուր տնային աշխատանք կարելի է ուղեկցել խաղով: Երեխային խաղի մեջ ներգրավելուն միտված այդ բոլոր միջոցներն ունեն մեկ նպատակ դաստիարակել ներդաշնակ զարգացած, հաջողված անձնավորություն: Երեխան խաղում է մի շարք զգացմունքներին համապատասխան:Դերախաղը հարստացնում է երեխայի զգացմունքները և զգայարանները:Երեխան կարող է հիշել ամիսներ առաջ տեղի ունեցած հաճելի մի իրադարձություն և խաղալ այդ իրավիճակը տիկնիկի հետ: Դերախաղ կարող են կազմակերպել չափահաս երեխաները փոքրերի հետ, սա ունի դրական ուղղվածություն, երբ,կազմակերպելով դերախաղ, չափահաս երեխաները կարող են փոխանցել իրենց “առաջնորդի” վարքը փոքրին:Երեխաները պետք է խաղան իրենց հասակակիցների հետ, այլապես կմեծանան բարդույթավորված, սեփական կարծիքից զուրկ, ագրեսիվ: Դերախաղը ծանոթանալու, շփվելու, ընկերանալու միջոց է:

[9]Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ., Նախադպրոցական մանկավարժություն, էջ 95-97

2.4. Դերախաղի նշանակությունը երեխայի զարգացման գործում

Դերախաղը երեխաներին հնարավորություն է տալիս բացահայտել իրենց ընդունակությունները: Անհրաժեշտ է ընտրել խաղի համար բազմաբովանդակ և հետաքրքրաշարժ թեմատիկա՝ <<Խանութ>>, <<Շտապ օգնություն>>, <<Բժիշկ-բժիշկ>>, <<Ընտանիք>>, <<Մանկապարտեզ>>, <<Տոնավաճառ>>, <<Շուկա>>, <<Շին հրապարակում>>: Դերային խաղը երեխայի համար սիրելի, զվարճալի, հետաքրքիր խաղ է, որը զարգացնում է նրա խոսքը, ստեղծագործական ունակութունները, ինքնուրույնությունը, խմբով խաղալու-աշխատելու հմտությունները: Դերախաղի էական նշանակությունը այն է, որ երեխան հայտնվում է ուրիշ մարդու դիրքում և կարծես աշխարհին նայում է այն մեծահասակի տեսանկյունից, որի դերը կատարում է: Երեխայի երևակայությունը զարգանում է հատկապես ստեղծագործական, դերային խաղերի միջոցով: Երեխան հավատում է իր հորինած կերպարին: Նա ոչ միայն հավատում է, այլև ինքն է կատարում այդ դերերը: Մտնելով կերպարի մեջերեխան դառնում է նա, ում ընդօրինակում է: Դերախաղը հիմնականում խմբային է, մասնակցում են մի քանի երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր դերը: Այսպես խաղում ձևավորվում են երկար, շղթայաձև փոխկապակցված խաղային խմբեր, օրինակ աշխատում է հիվանդանոցային համալիրը, բժիշկները զննում են հիվանդներին, վիրաբույժը վիրահատում է ատամնաբույժը բուժում է ատամները, շտապօգնության մեքենան հրդեհից այրվածներին հասցնում է հիվանդանոց և այլն: Դերային խաղերը ժամանցային բնույթի խաղեր են, դրամատիկ գործողության տեսակ, որի մասնակիցները գործում են ընտրված դերերի շրջանակներում, ղեկավարվում են ընտրված դերի միջավայրի տրամաբանությամբ և գործում են արդեն եղած սյուժեով, կամ հենց իրենք են ստեղծում սյուժեն: Հաջող է ստացվել խաղը թե ոչ, որոշվում է խաղացողի խաղի՝ ընդունված կանոններին համապատասխանությամբ: Այսպիսով դերային խաղն իրենից ներկայացնում է մեկ կամ մի խումբ անձանց կողմից որոշակի իրադարության խաղային մոդելավորումը: Դերային խաղի գործողությունները ծավալվում են այդ խաղի աշխարհում: Այդ աշխարհը կարող է լինել ամբողջովին հորինված, կամ հիմնված լինել ինչ որ գրքի կամ ֆիլմի, կամ մի իրադարձության սյուժեի վրա: Այսպիսի խաղերում շատ հաճախ բացակայում է վերջնական նպատակը և խաղի իմաստը կայանում է այդ խաղային աշխարհի ուսումնասիրումը:Դերային խաղն ունի ուսուցանող, դաստիարակող և պրակտիկ մեծ հնարավորություններ:Այն խոսքային, խաղային և ուսուցման միաժամանակյա գործընթաց է:

Գլուխ 3. Հետազոտական աշխատանքի գործնականությունը պարապմունքների ընթացքում

Պարպմունքը իրականացրել եմ Սևքարի մանկապարտեզում՝ միջին խմբում:Պարապմունքի թեման է դերային խաղը՝ ընտրել եմ «Բժիշկ-բժիշկ» խաղը: Պարապմուքը անց եմ կացրել «Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում» ուսումնամեթոդական ձեռնարկով: Պարապմունքի ժամանակ ներկա է եղել մանկապարտեզի տնօրենը:

Թեման-մասնագիտություններ
Տեսակը- զրույց
Նպատակը- Շարունակել տեղեկատվությունը մասնագիտությունների մասին:Երեխաները կկարողանան ասել բժշկական պարագաների անուններ / ջերմաչափ, ներարկիչ, վիրակապ/: Բառապաշարը կհարստանա մասնագիտությունների անուներով՝ բժիշկ, ակնաբույժ, ատամնաբույժ: Երեխաների մոտ ձևավորել խաղը «Բժիշկ-բժիշկ» խաղալու ունակությունը:
Անհրաժեշտ պարագաներ-մանկական բժշկական գործիքներ, տիկնիկներ և կենդանիներ:

Պարապմունքի ընթացքը- Պարապմունքը սկսեցինք «Ո՞վ ինչ է ուզում դառնալ» հարցով: Երեխաների պատասխանները լսելուց հետո, ընդհանրացնում ենք նրանց պատասխանները,ասելով, որ բոլոր մասնագիտություններն էլ կարևոր են և անհրաժեշտ են մարդկանց: Մարդիկ մասնագիտություններն ընտրում են իրենց ցանկությամբ և ժամանակի պահանջով: Կարդացինք հանելուկ բժշկի մասին.

Երբ հիվանդ ենք, շտապ հասնում

Ու դեղեր է նշանակում

Բոլոր մարդկանց նա բուժում

Ու ոտքի է կանգնեցնում:

Երեխաները գուշակեցին հանելուկը: Այսօր զրուցելու ենք բժշկի մասնագիտության մասին: Երեխաներ մեր մանկապարտեզում կա ևս մեկը, ով հոգում է ձեր առողջության մասին: Նա ընկեր Վանուհին է: Բուժքույրը հաճախ է այցելում մեր խմբասենյակ, զննում երեխաներին, մեկուսացնում հիվանդներին: Այսօր մենք հյուրընկալվելու ենք բուժքրոջ աշխատասենյակում:

Երեխաներ հիմա նստում ենք «Ուրախ գնացք» և ուղևորվում ենք բուժքրոջ աշխատասենյակ:Մեզ պետք է վարորդ, ես կլինեմ վարորդ, որ բոլորիս անվնաս տեղ հասցնեմ, իսկ դուք տեղավորվեք վագոնների մեջ: Երեխաները բռնեցին միմյացից և ուրախ երգելով ուղևորվեցինք բուժքրոջ մոտ: Այնտեղ մեզ դիմավորեց բուժքուրը, ողջունեցինք նրան, զրուցեցինք նրա աշխատանքի մասին, ցույց տվեցինք բժշկական գործիքներ՝ անվանեցինք դրանք:Մեզ հետ տարել էինք հիվանդ տիկնիկներ, խնդրեցինք բուժքրոջը, որ զննի հիվանդներին, մեկի կոկորդն էր ցավում, մյուսի ոտքն էր կոտրված: Բուժքույրը զննեց կոկորդը, պետք է ասել աաա, մի քիչ կարմրած է, դեղ նշանակեց,իսկ մյուս տիկնիկի ձեռքը՝ վիրակապեց: Մենք շնորհակալություն հայտնեցինք և վերադարձանք խմբասենյակ: Երեխաների հետ զրուցեցինք մեր ստացած տպավորություններից, երեխաները շատ ուրախ և ոգևորված էին:

Պարապմուքի երկրորդ հատվածում կազմակերպեցինք «Բժիշկ-բժիշկ» դերային խաղը;

Նախնական աշխատանք-Դադարներով ընթերցանություն «Բժիշկ Այբոլիտը» հեքիաթը:

Նպատակը- Զարգացնել երեխաների մոտ երկխոսությունը, որը պետք է լինի անկաշկանդ,երեխաների մոտ ձևավորել «Բժիշկ-բժիշկ» դերային խաղը խաղալու ունակությունը, զարգացնել ստեղծագործական մտածողությունը, հետաքրքրություն առաջացնել անասնաբույժի մասնագիտության նկատմամբ, զարգացնել կենդանիների նկատմամբ զգայուն, ուշադիր վերաբերմունք:

Դերեր-Բժիշկ, անասնաբույժ, բուժքույր, տիկնիկներ, հիվանդ կենդանիներ ունեցող երեխաներ:

Անհրաժեշտ պարագաներ-բժշկի աշխատասենյակ, սպասասրահ, բժշկական պայուսակ, բժշկական գործիքներ, սպիտակ խալաթ և գլխարկներ, կենդանիների հագուստներ:

Պարապմուքի ընթացքը-Երեխանե՞ր, հիմա մեր խմբասենյակում պետք է խաղանք մի շատ հետաքրքիր խաղ՝ «Բժիշկ-բժիշկ»: Ինչպես մենք իմացանք բժիշկը պետք է ունենա աշխատասենյակ, գործիքներ, որ կարողանա զննել հիվանդներին: Երեխանե՞ր, պետք է ընտրենք դերեր՝ բժիշկ և բուժքույր: Երեխաներն ընտրեցին երկու բժիշկ՝անասնաբույժ և բուժքույր: Բժիշկները նստեցին աշխատասենյակներում, իսկ երեխաները սպասասրահում՝ հիվանդ տիկնիկների և կենդանիների հագուստներով: Երեխաները հերթով մտնում են աշխատասենյակներ, բուժքրոջ ուղեկցությամբ: Ողջունում են բժշկին, ասում՝ ինչ գանգատներ ունեն: Բժիշկը զննում է հիվանդին, հարցեր է տալիս, թե ինչ է պատահել,ի՞նչ է տիկնիկի անունը,ինչի՞ց է գանգատվում: Դեղահաբ է նշանակում, երեխան շնորհակալություն է հայտնում և դուրս գալիս: Հետո մտնում են անասնաբույժի

սենյակ, ձեռքին մի նապաստակ՝ ոտքը վնասված, բժիշկը զննում է նապաստակին, վիրակապ է դնում ոտքին,երեխաները չեն մոռանում բարեկիրթ վարքի մասին, շնորհակալություն են հայտնում և դուրս գալիս: Երեխաները բոլորը մասնակցում են խաղին,բոլորը սիրալիր են և ոգևորված, խաղը անցավ ուրախ մթնոլորտում: Խաղից հետո ամփոփեցինք կատարված աշխատանքը՝

Ի՞նչ արեցինք այսօր: Ձեզ դու՞ր եկավ խաղը:

Ինչ նպատակ որ դրել էինք խաղի մեջ, հասանք մեր վերջնարդյունքին՝ խաղը վերածվեց ինքնաբուխ խաղի, այս համակարգի կիրառումը առաջին հերթին երեխային ազատություն է տալիս: Պասիվ երեխաները դրսևորեցին բավականին ակտիվություն, հաղորդեցինք գիտելիքներ: Երեխաները արտահայտեցին իրենց կածիքները: Զարգացավ երեխաների ստեղծագործական մտածողությունը: Որպեսզի երեխաները կարողանան ազատ մտածել ու գործել, պետք է այսպիսի խաղերը կիրառվեն պարբերաբար:

Դիտարկում դիտորդի՝ տնօրենի կողմից

1. Դաստիարակի նպատակն էր երեխաներին սովորեցնել երային խաղի միջոցով արտացոլել տարբեր իրադրություններ, մեծահասակների աշխատանքից փոքրիկ դրվագներ: Պատկերացում տալ մասնագիտությունների մասին՝ կարևորելով նրանց դերը մարդու կյանքում: Խաղի ընթացքում դաստիարակի կողմից ստեղծվեց հնարավորություն երեխաների ազատ ինքնաարտահայտվելու և ինքնուրույն գործելու համար: Դաստիարակը հասավ պարապմունքի նպատակին:
2. Խաղի ընթացքում երեխաները պահպանեցին բարձր տրամադրություն, որը նպաստեց նրանց առավել ազատ ու ակաշկանդ ինքնադրսևորմանը: Հնարավորություն տրվեց երեխաներին՝ շփվելու հասակակիցների հետ, ծանոթանալու մանկապարտեզի բուժքրոջ աշխատանքին:
3. Բժշկի մասնագիտությունը միշտ կարևոր ու արդիական է: Խաղի ընթացքում կարևորվեց բժշկի և անասնաբույժի աշխատանքը: Դաստիարակը պարզաբանում տվեց այդ մասնագիտությունների տարբերությունների և նմանությունների մասին:

Եզրակացություն

Այսպիսով՝ հետազոտական աշխատանքում ներկայացրիք խաղի հոգեբանության, դերային խաղերի անցկացման վերաբերյալ տեսագործնական ուսումնասիրություն և վերլուծություն, որի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ խաղը հսկայական ազդեցություն ունի երեխայի զարգացման մեջ, ոչ միայն այն պատճառով, որ այն նախադպրոցական տարիքի երեխայի գործունեության առաջնային ձևն է, այլև այն, որ խաղը հանդիսանում է արդյունավետ միջոց երեխաների վրա ներգործելու, նրանց մտավոր, հուզակամային ոլորտի, հաղորդակցության ոլորտի զարգացումը խթանելու համար: Խաղը դաստիարակում է երեխային թե ուղիղ, թե միջնորդավորված, մասնավորապես՝ կարող ենք նշել դերային խաղերով՝ կերպարի միջոցով: Դերախաղը իրականացնելով մանկապարտեզում, եզրահանգեցի, որ այն, երեխային տանելով մտացածին աշխարհ, հուզակամային հոգեվիճակը պահում է հավասարակշիռ և կայուն վիճակում՝ զերծ պահելով հուզական տրավմաներից: Զարգացնում է երեխայի խոսքը, զգացմունքները, ակտիվացնում զգայարանները: Դերային խաղերի կիրառությունը երեխաների միջև զարգացնում է միջանձնային ընկերական հարաբերությունները, ապահովում ակտիվությունը, երևակայությունն ու ստեղծագործականությունը, ստեղծում դրական և հաճելի մթնոլորտ: Այն ձևավորում է երեխայի անհատականությունը՝ ապահովելով նրա համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Իրականացնելով դերախաղ ես կարողացա և թեմայի վերաբերյալ իտելիքները փոխանցել երեխաներին, և նրանց պահել ակտիվ, և ապահովել նրանց ամբողջական մասնակցությունը, և ստեղծել հաճելի միջավայր: Փորձը ցույց է տալիս, որ դերախաղը երեխայի մոտ զարգացնելով միջանցնային հարաբերություններ կառուցելու կարողություն, երեխային դարձնում է կոլեկտիվի լիիրավ անդամ և անբաժան մաս՝ կարգավորելով երեխայի վարքը և վերաբերմունքը: Աշխատաքին մասնակից է դարձնում նույնիսկ այն երեխաներին, ովքեր ավելի ամաչկոտ են և հաճախ խուսափում են խաղալ և արտահայտվել: Դերախաղը նպաստեց, որ պարապմունքը լինի էլ ավելի արդյունավետ : Համադրելով ուսուցման մեթոդները, խաղային տեխնոլոգիան, ես հասա պարապմունքի անցկացման իմ կողմից սահմանված վերջնարդյունքներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա.Մ., Նախադպրոցական մանկավարժություն, 126 էջ
2. Фрейд З. , Психоанализ, теория и метод. Концепция защитных механизмов
3. Губанова Н. Ф. «Развитие игровой деятельности. Система работы в средней группе детского сада» с. 23-26
4. Сухомлинский В.А., Сердце отдаю детям. Рождение гражданина. Письма к сыну.-К.: Рад. шк" 1985., 557 с
5. Рябкова И. А., ролевое замещение в игре дошкольников в условиях Разной предметной среды, М., 2019, с 157
6. Губанова Н. Ф. «Развитие игровой деятельности. Система работы в средней группе детского сада» с. 152
7. Шмаков С.А. «Игры – шутки, игры – минутки» Москва. «Новая школа» 1993
8. Доронова Т.Н. 3-4 տարեկան երեխաների դաստիարակություն, կրթություն և զարգացում մանկապարտեզում(թարգմ.), Կրթություն, 2006 թ. - 208 էջ

Ինտերնետային հղումներ

1. Ушинский К. Д. , о дошкольном воспитании / https://ignom.ru/books/doshkolnaya_pedagogika/dshped32.html

2. Теория игры, Карл Гросс / https://family365.ru/posts/razvitie-detei-teorija-igry-karla-grossa.html